Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Տորունիքի հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի հայոց լեզու, գրականություն (6 **դասաժամ**), **ռուսաց լեզու** (9 **դասաժամ**), **անգլերեն** (4 **դասաժամ**), **Հայաստանի աշխարհագրություն** (2 **դասաժամ**), **ինֆորմատիկա** (1 **դասաժամ**) , **հայոց պատմություն** (2 **դասաժամ**), **համաշխարհային պատմություն** (2 **դասաժամ**) , **հասարակագիտություն** (1 **դասաժամ**) , **հեպ** (1 **դասաժամ**), **ֆիզիկա** (2 **դասաժամ**) , **քիմիա** (2 **դասաժամ**), **կենսաբանություն** (2 **դասաժամ**), **ֆիզկուլտուրա** (11 **դասաժամ**), I **դասարանի դասվար** (17 **դասաժամ**), II **դասարանի դասվար** (19 **դասաժամ**), IV **դասարանի դասվար** (18 **դասաժամ**) **և զինղեկ** (0,5 **հաստիք**) **ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00} -ից 15^{00} -ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 **թ. սեպտեմբերի** 18-**ին՝ ժամը** 15^{00}-**ին**, Տորունիքի հիմնական դպրոցում, հասցե՝ գ. Տորունիք 6 փ., շ. 6: Տեղեկությունների համար զանգահարել 093811210 հեռախոսահամարով: